

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2022-9-11-Ա

ք. Երևան

14.10.2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի հոկտեմբերի 14-ի նիստում քննարկեց 2022 թվականի սեպտեմբերի 19-ին արտոնագրային հավատարմատար Ալբինա Նազարյանի կողմից ներկայացված՝ «Ինտերնեյշնլ Մասիս տաբակ» ընկերության (<<, Արարատի մարզ, 0802, ք. Մասիս, Հրանտ Վարդանյան փողոց 10, AM) «MASTER ONE IMT» (No20212363) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, քանի որ այն շփոթություն է առաջացնում 34-րդ դասի ապրանքների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «THE ONE» («Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ ք. Մասիս, Արդյունաբերական հանգույց, Գործարանային 10 AM, N 11440, 20.02.2007թ., N 26853, 25.12.2017թ.) և «IMT MT ONE» («Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ ք. Մասիս, Արդյունաբերական հանգույց, Գործարանային 10 AM, N 13087, 18.07.2008թ.) համակցված ապրանքային նշանների նկատմամբ: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 122-րդ կետի 10-րդ ենթակետի, 130-րդ կետի 1-ին ենթակետի և 133-րդ կետի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման կարող են լինել համակցված ապրանքային նշանները: Ապրանքային նշանների նմանությունը որոշելիս հաշվի է առնվում դրանց մեջ առկա բառային տարրերի նմանության հարցն առանձին վերցված: Տվյալ դեպքում համեմատվող ապրանքային նշանների բառային տարրերն ունեն ձայնային նմանություն, որը որոշվել է նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով, այն է՝ գրանցված համակցված ապրանքային նշանի «ONE» բառային տարրն ամբողջությամբ ներառված է հայտարկված ապրանքային նշանի մեջ: Ինչ վերաբերում է Ձեր կողմից ներկայացված փաստարկներին առ այն, որ ավելի

վաղ ապրանքային նշանը պատկանում է հայտատուին և իրավատեր է հանդիսանում «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ընկերությունը, և տարբերությունը կայանում է հայտատուի հասցեի մեջ, ապա ցանկանում ենք տեղեկացնել, որ Օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 2-րդ մասի համաձայն հայտատուն կամ ապրանքային նշանի իրավատերը պետական լիազոր մարմինն պետք է տեղեկացնի՝ իր անվան, ազգանվան կամ գտնվելու վայրի (հասցեի) փոփոխության մասին և հայտում կամ պետական գրանցամատյանում փոփոխություն կատարելու մասին դիմումին կից պետական լիազոր մարմին է ներկայացվում օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ: Հետագա քննարկման ժամանակ խորհրդի մի քանի անդամներ ներկայացրեցին իրենց կարծիքը այն մասին, որ կարելի է բավարարել բողոքը, քանի որ չնայած նրանց հասցեները տարբեր են, սակայն հայտատուն և հակադրված ապրանքային նշանի իրավատերը նույն ընկերությունն են և տրամաբանությունը հուշում է, որ ներկայացված ապրանքային նշանը պետք է գրանցվի:

Փորձաքննության բաժնի պետը համաձայն չէր խորհրդի մեծամասնության կողմից ձևավորված բողոքը բավարարելու կարծիքի հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում 5 կողմ և 2 դեմ ձայների հարաբերակցությամբ.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Ալբինա Նազարյանի կողմից ներկայացված «Ինտերնեյշնլ Մասիս տաբակ» ՍՊԸ ընկերության «MASTER ONE IMT» (No20212363) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը ամբողջությամբ բավարարել, փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և ապրանքային նշանը գրանցել:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱԿ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ